Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(29 սեպտեմբերի, 2013 թ.)

Սիրելի ներկաներ,

Աղոթասաց հոգով եւ սրտի խոր տխրությամբ այսօր հրաժեշտ ենք տալիս մեր ժողովրդի սիրեցյալ զավակին՝ հայ կինոյի ու թատրոնի նվիրյալ մշակ Սոս Սարգսյանին: Մեծանուն հայորդին բարի հիշատակ է թողնում մեր հոգիներում՝ ի Տեր ննջելով ստեղծագործական արգասավոր վաստակով եւ արժանավոր գործերով:

‹‹Երանելի է մանաւանդ տալն, քան առնուլն››. ավետարանական այս պատվիրանով Սոս Սարգսյանը ապրեց ու արարեց եւ մինչ կյանքի վերջին պահը ձգտեց Տիրոջից իրեն պարգեւված շնորհները, իր իմացությունն ու կարողությունները ծառայեցնել Մայր հայրենիքին ու հարազատ ժողովրդին: Երիտասարդ տարիքում մուտք գործելով բեմարվեստի ասպարեզ, Սոս Սարգսյանը իր ուրույն անկեղծությամբ բնորոշ ոճով եւ պայծառ տաղանդով փայլեց ժամանակի անվանի մեծությունների կողքին: Մեր ժողովուրդը առաջին իսկ դերակատարումներից բարձորեն գնահատեց նրա խորազգաց ու մեծ արվեստը եւ զգաց նրա անձով վեր հառնող հոգեհարազատ ազգային նկարագիրը: Լուսավոր միտք, անխոնջ աշխատասիրություն, պատվախնդրություն գործի հանդեպ. այսպես ներկայացավ արվեստասեր հանրությանը լուսահոգի հանգուցյալը եւ անկրկնելի վարպետությամբ մարմնավորեց բազմաթիվ դերեր: Մեր ժողովուրդը հավետ երախտապարտ պիտի լինի Սոս Սարգսյանին եւ նրա տաղանդավոր սերնդակիցներին, ովքեր պահպանելով ազգային մեր ավանդները, նոր շունչ ու ոգի հաղորդեցին հայ բեմարվեստի առաջընթացին: Հետպատերազմյան տարիներին, բազմաթիվ դժվարությունների ու խոչընդոտների մեջ նրանք կերտեցին հայ թատրոնի ու կինոյի ոսկեդարը՝ ստեղծելով մեծ կտավի գործեր, որոնք ազնվության, արդարության, մարդասիրության բարձր արժեքներով ու սկզբունքներով, մեր ժողովրդի եւ հայրենիքի հանդեպ ճշմարիտ սիրով, պարտքի գիտակցությամբ սերունդներ կրթեցին եւ շարունակում են հուզել եւ ուսուցանել երիտասարդներին:

Այս արժեքների կրողն էր մեծ վարպետը եւ նախանձախնդրորեն փոխանցում էր իր ուսանողներին՝ Կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտում, նաեւ իր իսկ հիմնած Համազգային թատրոնում դասավանդելով երկար տարիներ եւ մեծ ավանդ բերելով ապագա դերասանների պատրաստության գործին: Որպես իսկական մտավորական՝ հայրենասեր հայորդին ջերմ սիրով զորակցեց արցախյան ազատամարտին, քաղաքացիական բարձր գիտակցությամբ պայքարին մասնակցություն բերելով առաջին իսկ օրերից: Մեծանուն դերասանը ազնիվ ջանքեր բերեց մեր անկախ պետականության կայացմանը, մեր երկրի առջեւ ծառացած խնդիրների հաղթահար-

ման ընթացքներին, միշտ ձգտեց կարելին ի սպաս բերել հանուն մեր երկրի ու ժողովրդի լուսավոր գալիքի: Լուսահոգի Սոս Սարգսյանը երանյալ կյանք ապրեց եւ հավիտենություն փոխադրվելով՝ իր պայծառ հիշատակը թողեց մեր սրտերում:

Այսօր մխիթարությամբ ենք անդրադառնում, որ բազմաթիվ պետական ու մշակութային պարգեւների ու մրցանակների կողքին լուսահոգի Սոս Սարգսյանի կուրծքը արժանիորեն զարդարված է նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ պատվո բարձր շքանշանով:

Մեր հոգեբուխ աղոթքն է, որ Բազումողորմ Աստված երկնային երանավետ բարձունքներում խաղաղության մեջ ընդունի Իր ծառայի՝ Սոս Սարգսյանի լույս հոգին՝ դասելով ‹‹ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան Իւրոյ››: Թող Տերը Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգեւի Սարգսյան ընտանիքի սգակիր անդամներին, գործընկերներին եւ մեր ողջ ժողովրդին:

Խունկ, աղոթք եւ օրհնություն հոգելույս Սոս Սարգսյանի բարի հիշատակին:

Վշտակցությամբ եւ օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ